

Թեան և հրամանի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և լուսաւոր-
չական սրբազան սիւնհոգոսին:

26 Դեկտեմբերի 1860 ամի.

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱԽԱԿԸ ՄԱՏԹԻՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ:

Մինչ փոխարէն մերոյ զցայգ և զցերեկ գրաւոր աշ-
խատութեանց յօգուտ ազգի առ 'ի վեհափառ գլխոյդ յու-
սայաք հանդիպիլ բանից քաջալերութեան և գովութեան, և
ահա ժամանեաց առ մեզ արձակեալն յանցելոյ նոյեմբերի
26 թուականէ կոնդակ Ձեր տհաճութեան սոսկ և եթ, որ-
պէսզի Հիւսիսափայլ օրագիր մեր ախորժելով և նկատմամբ
խնդրիցէ երգիծանել զազգն թէ զաշխարհականս և թէ զհո-
գեւորս. խռովիմք և ոչ, զի ոչ ստգտանէ զմեզ խիղճ մեր,
գուցէ մասնաւոր ոմանք յաշխարհականաց և 'ի հոգեւորաց
մերոց ամբաստանեալ իցեն զանաչառ ազատախօսութենէ Հիւ-
սիսափայլի, որով մերկացուցեալ էին 'ի հրապարակի նոցայն
գործք արատաւորք և վնասակարք ազգին, բայց դոքա չեն
ազգն և նոցուն բարեմիտք 'ի հասարակի, այլ առանձնականք
ոմանք վարակեալք անձնական ախտիւր թշնամութեան
և նախանձու. որովք և զտգէտն ամբոխ վարակել ջա-
նան և յարուցանել ընդդէմ մեր. ո՛չ վեհափառ Տէր,
ազգն հաճ և հաւան է ընդ գնացս Հիւսիսափայլի.
և գրագէտքն 'ի նոսին բազում հեշտութեամբ ըն-
թերցասիրեն զայն, դոքին իսկ ամս երիս ահա արծաթով
իւրեանց պահպանեալ են զհրատարակութիւն Հիւսիսափայլի
և աղաչեն զմեզ յառաջ տանել զայն և պսոսհետեւ Եւսմ
անմարթ էր լինել այսպէս, եթէ բարեմիտ հասարակութիւնն
գտանէր յիմում օրագրի 'ի վնասակարացն ինչ իւրուան օգ-
տի և լուսաւորութեան յաւուրս մեր: Եւ ոչ ամբաստանեմ

զազգէն, զի մասնաւորք ոմանք ագէտ և չարեացակամ ան-
 ձինք ամենայն տեսակ ապականութիւնս հեղեղեցին 'ի վերայ իմ
 և հեղեղեն զօր ամենայն զի որոշեմ զազգն 'ի մասնաւորաց և
 քաջ գիտեմ, զի յամենայն ազգս եղեալ են և գոն այդպիսի մաս-
 նաւորք, ատեցողք լուսոյ և սիրողք խաւարի, զի գործք
 իւրեանց չարութեան են. վեհափառ Տէր, ասացեալն գի-
 տութիւն առ ևրոպացիս չէ կոչեցեալ առ 'ի հաճել զմիտս
 ագիտաց կամ քաղցրաբանութեամբ շողորթութեւ զանձնական
 ախտս մասնաւորաց կամ զբազմութեան, ատելութիւն և
 թշնամութիւն չիբ 'ի գիտութեան, սորայս պաշտօն է անա-
 չառաքար քարոզ լինել ճշմարտութեան և հատուցանել զար-
 ժանն բարեկամի և թշնամոյ առանց երգիծասիրութեան,
 գիտութիւնն չունի երկտեսակ կշիռ, նա պարծի միայն յիւրն
 'ի հաւասարակշիռ արդարութիւն առ ամենայն ոք, գիտութիւնն
 ոչ բժշկէ վիրօք զվէրս՝ այդ սեփհական է միայն ագիտացն
 քրիստոնէական եղբայրսիրութեան, որպէս էին հայք և հո-
 ռոմք յաւուրս ներսիսի Լամբրոնացոյ, որ զմիմեանս հայ-
 հոյէին և թշնամանէին, առօրս և ասացաւ ռօվ մտացի դու,
 ուր ուսար վիրօք զվէրս բժշկեւ: Զոր ինչ քարոզէ երանե-
 լի Հայր մեր Լամբրոնացի 'ի կրօնականս, զոր ինչ 1800 ա-
 մօք յառաջ քարոզեալ է Աւետարան և Առաքեալք, զնոյն և
 մք ուսուցանեմք, միայն թէ ստիպիմք ասելով յոյժ և յոյժ
 ցաւելով, զի հայք մեր ոչ միշտ ուղիղ գնան յաւետարանին,
 այլ վիրօք զվէրս բժշկեն, չարին չար հատուցանելով, հա-
 լածասիրութիւն քարոզելով առ հայազգի եղբարս, դատելով
 զխիղճ միմեանց, վեհափառ Տէր, գիտութիւնն չէ եղբայրա-
 տեաց, այլ մանաւանդ եղբայրասէր և մարդասէր, և յայս
 սակս քննէ 'ի լոյս և 'ի յայտնութիւն ընծայեցուցանէ զամենայն
 ծածուկ խոյս և զկեղս 'ի մարդկային մարմնի, առ 'ի
 զբժշկութիւն հնարաւորելոյ: Յաճախ անգամ ցաւագարու-
 թիւնքդ այդոքիկ հնացեալ նեխեալ և յապականութիւն
 բոլոր մարմնոյն յառաջացեալ, պատճառս տան իմաստուն
 բժշկաց սաստիկս 'ի գործ դնելոյ զհնարս, այսինքն սուր և
 հուր ըստ Հիպոկրատեան խրատուն. հնարքս այսոքիկ արդա-
 րե ցաւեցուցիչ են յոյժ, վասն զի սուրն հատանէ և հուրն
 այրէ, երկօքն ևս վէրս գործելով, բայց 'ի գիտութեանն
 հանդիսի, զբժշկութիւնն առաջի աչաց ունելով խորհուրդ

ցանկալի և փրկաւետ, այդ ո՛չ ասի վիրօք զվէրս բժշկել, այլ բժշկել զցաւագարեալն, որով հնարիւք մարթ էւ Վեհափառ Տէր, եթէ գոն մարմնաւոր խղիւք և կեղք, գոն և բարոյականք, որք միտ դնելով չափու և հասակի նոցա, կարօտին յաւետ կամ նուազ սաստիկ բժշկական հնարից. 'ի մերումս լուսաւորեալ դարու ինչ ոչ օգնէ ծածկել և վարագուրել զվէրս մեր, և զինչ օգուտ արտաքուստ երևեալն յառողջութենէ մինչ 'ի ներքուստ տանջին և քայքային զմարմին ցաւագարութիւնք: Եթէ կամիք փոքր 'ի շատե յառաջ խաղացուցանել զհայս (և ամենայն ոք որ չեցէ թշնամի ազգի, պարտական է կամել և ցանկանալ այդմ) կարեւոր է յղժ մատենագրական հրապարակախօսութեամբ 'ի լոյս և 'ի յայտնութիւն ածել զամենայն խղիւ և կեղս ազգային մարմնոյ, զամենայն բարոյական ցաւս և զվիշտս նորա, զի ազգ մեր նախ և յառաջ ծանիցէ զանձն իւր, ինքն վկայեսցէ իւրոցն պակասաւորութեանց և ապա միաբան զօրութեամբ ձեռն 'ի գործ արկեալ խնդրեսցէ զհնարս բարեկարգելոյ զդրութիւն իւր: Զայս ճանապարհ, Վեհափառ Տէր, գնացեալ է և համօրէն երևելի լուսաւոր ազգաց Եւրոպիոյ, զայս ճանապարհ ընթանայ այժմոյս Ռուսաստան մեր՝ հարկւրաւոր տեսակ տեսակ օրագիրք ամենայն համարձակախօսութեամբ քննելով և 'ի լուր ժողովօրդեան բարոյելով ոչ թէ միայն զազգային պակասաւորութիւնս, այլ և զթերութիւնս նոյն իսկ բաղաբական կարգաց և օրինաց, զայս ճանապարհ պարտ է գնալ և սիրելի հայրենակցաց մերոց, եթէ չկամիմք դատապարտել զնոսա 'ի մշտնջենաւորն յետնութիւն 'ի միջի ազգաց: Վեհափառ Տէր, իմ չիք ոչ մի պատճառ թշնամանելոյ զազգ իմ, այլ իբրև հայ գիտնականի ենամենայն պատճառք սիրելոյ զնոսա և ամենայն ուխտաւրստի ցանկանալոյ տեսանել զնա օր մի յառաջբախտաւորեալ ամենայն բարեմասնութեամբք: Եթէ չսիրէի զազգն իմ, Վեհափառ Տէր, առ ի՛նչ այսքանեաց ամաց ո՛չ տալով բուն աչաց և նինջ արտաւանաց, ջանք և վաստակք յօգուտ ազգին 'ի դաստիարակութիւն և 'ի կրթութիւն նորուն զաւակաց: Թշնամի և ատեցող ազգի են նոքա, որ ոչ գան առ լոյսն, զի մի խայտառակեսցին, դոքա և ամբաստանեն զինէն և զիմոյս Հիւսիսափայլէ, վաճն զի երկնչին 'ի լուսոյն հրապարակէ: Գամ այժմ 'ի պատասխանատուութիւն բանից Վեհափառ

Տեառնդ իմոյ, որ ոչ փոքր 'ի զարմանս էած զիս, համարելով զիս պաշտպան անհարազատից մերումս առաքելական, ամենաբարեպաշտ եկեղեցւոյ, ես ըստ առաքելոյն՝ ճշմարտապէս Բրիստոսեան և առաքելական եկեղեցի հասկանամ զայն՝ որ քարոզէ և արդեամբ լցուցանէ զընդհանուր բրիստոնէական եղբայրսիրութիւն, առանց խտիր առնելոյ ընդ Հայ և ընդ Յոյն, ընդ սկիւթացի և բարբարոս, ընդ Հռովմէացի և Գերմանացի, որ ամենեքեան մի են 'ի Բրիստոս Յիսուս, առջի աչաց ունելով զայն տխուր անցս, որ 'ի նորումս անցին 'ի Ցաճկաստանի կամեցաք և մեր ամենայն բարեսիրհրդութեամբ խաղաղել զզայրացեալ և զխռովեալ ոգիս երկուցունց կողմանց, և յայն սակս ասացաք 'ի մերում Հիւսիսափայլի, վեցամսեակ երկրորդ երես 311, թող այդ երեք ազգային բաժինքն (լուսաւորչականք, կաթողիկէք և պրոտեստանտք) իւրեանց դրոշի վերայ արձանագրեն միապէս այս երեք բառս որպէս նոցա կեանքի թանկագին առածք, որպէս նոցա աչքի բերք, եղբայրսիրութիւն, հայրենասիրութիւն, միաբան անձնազորութիւն հասարակաց հայրենիքի համար, ասացաք զայսոսիկ խրատ տալով երկուցունց կողմանցն զբանք դնել բրիստոնէական եղբայրսիրութեամբ բժշկել ազգային մարմնի մէջ ընկած ճեղքը, բան թէ հալածասիրութեամբ օրէօր աւելի լայնացնել դորան և օրէցօր աւելի հեռի բաժանել միմեանցից սիրտերն և հոգիներն» երես 310-311: Վեհափառ Տէր. դիցուք աղբիւրն իմոց տեղեկութեանց զանցից զայնմանէ՝ էր սխալական, և մեղաւորք էին պրոտեստանտեանք, այլ ոչ մերայինք, բայց և այդպէս անվայել է ինձ պարտաւորութիւն առ 'ի Չէնջ, վասնզի կէս մի սխալականք իմ չէ՝ եղեալ խորհրդով, այլ դիպուածով և յակամայս, սյսինքն 'ի սխալականութենէ աղբերն՝ ուստի հանեալ էր իմ զտեղեկութիւնս, ուրեմն և անկասկածելի անձն իմ. և կէս մի յայդպիսի դէպս ունիմք մեզ առաջնորդ զբանս Առաքելոյն առ 'ի Հօրէ Վերաբուրք ապաքէն, զի ասացաւ սիրեսցես զընկեր քո և ատեսցես զթշնամին քո, բայց ես ասեմ սիրեցէք զթշնամիս Ձեր, օրհնեցէք զանիծիչս Ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, զի եղբիւր որդիք հօր ձերոյ, որ յերկինս է: Զի եթէ սիրեցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ, զի՞նչ վարձք իցեն, ոչ ապաքէն և մաքսաւորք զնոյն

դործեն, արդ՝ եղերուք դուք կատարեալք որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալէ (Մատթ. Գլ. 5 համար 43—48)։ Այլ և Վեհափառ Տէր, ցաւ մեծ եղև սրտի իմում տեսանել 'ի բանից Ձերոց, թէ ամենևին նկատեալ չէ ձեր զիմ առանձին սէր և պաշտպանութիւն մերոյս մայրենական եկեղեցւոյ, զորոյ բազում օրինակս և անտարակուսելի ապացոյցս յանդիման կացուցաք մինչև ցարդ 'ի զանազան ամսատետրակս Հիւսիսափայլի, ոչ ապաքէն ես ինքս 'ի յիշեալ վեցամսեկի երես 311, յայտնեալ իմ զիմ տհաճութիւն և անհաւանութիւն ընդ արարս պապականաց և պրոտեստանտից, ոչ ապաքէն իբրև զարս անբարոյականս անխիղճս և անկրօնս դատապարտեալ է իմ զառ մեզ գտեալ մարդիկ, որ յայտնի և 'ի ծածուկ ջանան միաւորել զեկեղեցի մեր ընդ Յունականին, մի՞թէ զայր պոպիսի, որոյ առեալ էր յանձն իբրև բաղաբացի Ռուսաց Տէրութեան՝ արձակ համարձակ խօսել զսոյսպիսի բանս 'ի լուր ժողովրդեան, մի՞թէ զսոյսպիսի բաջ և աներկիւղ պաշտպան իւրումն հարազատ եկեղեցւոյ՝ արժան իցէ կոչել այնպէս, որպէս կոչիմս առ 'ի Ձէնջ, զայս թողում 'ի վճիռ արդարութեան և խոհականութեան Վեհափառ Տեառնդ իմդս։

